ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀՐԵԱՆԵՐԻ ՀՈԼՈՔՈՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԿՈԲԵԼՅԱՆ

Ցեղասպանության հիշողության պահպանումը և տարածումն իրենից ենթադրում է մի շարք մեխանիզմների համակցված ու երկարատև աշխատանք: Ե՛վ Հայոց ցեղասպանության, և՛ հրեաների Հոլոքոստի հիշողության պահպանման ու տարածման մեխանիզմները բազմաթիվ են, սակայն ամենաարդյունավետ և միաժամանակ լայն շրջանակներ ընդգրկող մեխանիզմ կարելի է համարել թանգարանային ցուցադրությունը: Վերջինս թանգարանային հաղորդակցության հիմքն է, որի շնորհիվ ապահովվում է մշակութային և գիտական արժեքների հետ մարդու անմիջական շփման հնարավորությունը[1]*:*

Ե՛վ Հայոց ցեղասպանությանը, և՛ հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանները միևնույն ժամանակ նաև գիտակրթական խոշոր կենտրոններ են ու իրենց ֆոնդերում ներառում են մեծ քանակությամբ փաստաթղթեր, լուսանկարներ, ֆիլմեր և այլ նյութեր: Փաստենք, որ Յադ Վաշեմում[2] *տասնամյակների ընթացքում հավաքվել է շուրջ 154 մլն տպագիր և անտիպ էջ, 420 հազար լուսանկար, հազարավոր ֆիլմեր և Հոլոքոստը վերապրածների տեսանկարահանումներ*[3]*, նաև 54 լեզուներով հրատարակված 125 հազար միավոր գրականություն*[4]*: Միացյալ Նահանգների Հոլոքոստի Հուշային Թանգարանի (այսուհետև՝ ՄՆՀՀԹ) գրադարանում առկա է ավելի քան 83 հազար միավոր գրականություն շուրջ հինգ տասնյակ լեզուներով, արխիվները պարունակում են փաստաթղթերի մոտ 68 մլն էջ և ավելի քան 87 հազար լուսանկար*[5]*: Հայոց ցե-*

---

[1] Российская музейная энциклопедия. Ред. коллег. В. Янин и др., т. 2. М., 2001, с. 355.

[2] *Հրեա ժողովրդի եվրոպական հատվածի աղետի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը կոչվում է «Յադ Վաշեմ. Հոլոքոստի նահատակների և հերոսների [մասին] հիշողության [ապահովման] իրավասու մարմին»* (“Yad Vashem. The Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Authority”)*:*

[3] *Մանրամասնտե՛ս* http://www.yadvashem.org/yv/en/about/archive/about_archive_whats_in_archive.asp

[4] *Մանրամասն տե՛ս* http://db.yadvashem.org/library/search.html?language=en. *Տե՛ս նաև Հ. Մարուքյան. Յադ Վաշեմ. Հոլոքոստի մասին հիշողությունն Իսրայելում.* http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2465&sphrase_id=2531; *Յադ Վաշեմն ու Իսրայելի հասարակությունը.*–http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=794&sphrase_id=26946:

[5] http://www.ushmm.org/museum/press/kits/details.php?content=99-general. *Տե՛ս նաև Հ. Մարուքյան. Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանը ամերիկյան արժեքների համատեքստում.*– http://www.noravank.am/arm/articles/detail.php? ELEMENT_ID=792&sphrase_id=2531:

դասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետև՝ ՀՅԹԻ) ֆոնդերում կա 71455 միավոր առարկա, որից 6490 լուսանկար և սնանկար, 11183 միավոր գրականություն, որից 1956-ը լույս են տեսել մինչև 1930 թ. և դրանցից շատերը սկզբնաղբյուրային արժեք ունեն, ինչպես նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերող 36715 միավոր փաստաթուղթ[6]*: Այսպիսի ահռելի քանակությամբ նյութերից վերոնշյալ թանգարանների մշտական ցուցադրության մեջ ընդգրկված են ընդամենը մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար միավոր առարկա: Այս պարագայում միանգամայն հասկանալի է հայտնի ռուս թանգարանագետ Տ. Պոլյակովի այն միտքը, որ գիտական յուրաքանչյուր ցուցադրություն «Ո՞րն է ճշմարտությունը» հարցին պատասխանելու փորձ է*[7]*: Եվ խիստ դժվար է, եթե ոչ անհնար, ցուցասրահի սահմանափակ տարածքում ներկայացնել մեկ կամ մի քանի ազգերի ողբերգություն և դրա մեջ ներառել մի քանի միլիոնների հասնող մարդկանց կենսագրություններ: Անգամ եթե հաշվի առնենք, որ տվյալ թանգարանն ունի հսկայածավալ նյութ, այն չի կարող նախ այդ ամենը ներկայացնել ցուցադրության մեջ. ցանկացած ցուցադրություն, որը գերհագեցած է ցուցանմուշներով ենթակա է տապալման: Երկրորդ՝ ցեղասպանությունները եղել են բազմաշերտ. դրանք ենթադրել են տարբեր գործողությունների հերթափոխ, գործող միլիոնավոր անձիք և այլն: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ կան դեռևս չլուսաբանված մի շարք հարցեր, ապա այսօրվա այցելուին այդ ամենը անհնար է ներկայացնել պատմական ճշգրտությամբ: Այս պարագայում մնում է միայն ցեղասպանությունը ներկայացնել որպես գործընթաց և տալ հումանիստական գնահատական՝ նմանատիպ երևույթներն ապագայում չկրկնելու ենթատեքստ ունենալով:*

Հայոց ցեղասպանությանը և հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրությունների կազմակերպման հայեցակարգային մոտեցումների առանձնահատկությունները ներկայացնելու համար դրանք դիտարկենք հետևյալ տեսանկյուններից:

1. Ի՞նչ սկզբունքով է ներկայացված ցեղասպանության ժամանակագրությունը ցուցադրության մեջ:

2. Ցեղասպանության «զոհ» և «վերապրած» հասկացությունների ընկալումը և ներկայացման ձևերը ցուցադրության մեջ:

3. «Մեղավոր կողմին» ներկայացնելու սկզբունքը. գաղափարախոսական և էթնիկական հատկանիշների ներկայացումը ցուցադրության մեջ:

4. Այլ ցեղասպանությունների, տեղահանությունների և կոտորածների ներկայացվածությունը ցուցադրության մեջ:

1. Ուսումնասիրվող երեք թանգարաններն էլ (ՀՅԹԻ, Յադ Վաշեմ, ՄՆՀՀԹ) «պատմողական» թանգարաններ (narrative museums) *են: Ի տարբերություն պատմական պրոֆիլի շատ թանգարանների՝ այս թանգարաններն ավելի շատ հիմնված են ոչ թե պատմությանը վերաբերող առարկաների և արվեստի*

---

[6] *Հ ՅԹԻ-ի գիտական ֆոնդ, բաժին 58, թղթ. 12, թիվ 766:*

[7] Т. П о л я к о в. История и мифология в музейной экспозиции.– «Музейная экспозиция», сборник научных трудов. М., 1997, с. 131.

գործերի հավաքածուների, այլ՝ պատմության վրա[8]: Այսպիսի թանգարանների մշտական ցուցադրության կարևոր խնդիրներից է տվյալ իրադարձության ժամանակագրությունը ճշգրտորեն և հասկանալի ներկայացնել այցելուին, այդ իսկ պատճառով ցուցադրության հայեցակարգում պետք է հստակ երևան ժամանակագրության բաժանումներն ու ամեն մի բաժնի առջև դրված խնդիրները:

Ցեղասպանությանը նվիրված ցուցադրությունների ժամանակագրությունը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի՝ նախացեղասպանական, ցեղասպանության ընթացքի և հետցեղասպանական, որոնց մեջ էլ, իրենց հերթին, առանձնանում են ենթափուլեր: Եվ եթե «նախացեղասպանական» և «հետցեղասպանական» փուլերի խորագրերի տակ կարելի է մեկ ամփոփ նկարագիր տալ և որոշ դեպքերում անգամ չբաժանել ենթափուլերի, ապա բուն ցեղասպանության հատվածի հերթականությամբ ներկայացումն այցելուին հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացնել ցեղասպանության ընթացքը, կողմերի գործողությունները, ընդհանուր աշխարհաքաղաքական խճանկարը, և բացի այդ ացելուն կստանա զանազան հարցերի սպառիչ պատասխան:

Հայոց ցեղասպանության թանգարանի մշտական ցուցադրությունում ներկայացված են 1894–1896 թթ. համիդյան ջարդերը, 1909 թ. Ադանայի կոտորածը և հատկապես 1915–1923 թթ. Հայոց ցեղասպանությունը՝ որպես անհերքելի փաստ. ցուցադրության հիմնական ուղղվածությունը պատմական այս իրադարձություններն այցելուին համոզիչ ներկայացնելն ու ապացուցելն է: Ցուցանմուշների հիմնական մասը վերաբերում է 1915 թ. իրադարձություններին: Ցուցադրության այսպիսի մոտեցման դեպքում թեմային անտեղյակ այցելուն «Ինչո՞ւ եղավ Հայոց ցեղասպանությունը» և «Ի՞նչ կորցրեց մարդկությունը Հայոց ցեղասպանության արդյունքում» հարցերի պատասխանները լիարժեքությամբ չի ստանում: Մեր կարծիքով՝ սա կարևոր դրվագ է, քանի որ ցեղասպանությունը նախ և առաջ հանցագործություն է մարդկության դեմ, առավել ևս, որ Հայոց ցեղասպանությունը XX դ. առաջին ցեղասպանությունն էր և դրա կազմակերպիչների անպատիժ մնալու պատճառով էր, որ աշխարհը հետագայում ականատես եղավ մի շարք այլ ցեղասպանությունների:

Հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների՝ մասնավորապես Յադ Վաշեմի և ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրություններում այցելուն տեսնում է Հոլոքոստի իրականացման ընթացքը: Այստեղ կարևոր է նշել, որ ֆաշիստական Գերմանիան □գերմանական ճշգրտությամբ□ է կատարել իր «գործը» և, հետևաբար, թանգարանային ցուցադրության մեջ Հոլոքոստի ժամանակագրությունը ներկայացնելն ավելի դյուրին է, քան Հայոց ցեղասպանության ժամանակագրությունը: Բացի այդ՝ Գերմանիայի կողմից Հոլոքոստի ճանաչումը բավական հեշտացրեց այս թեմայով ցուցադրությունների կազմակերպման

---

[8] J. W e i n b e r g, R. E l i e l i. The Holocaust Museum in Washington. New York, 1995, p. 49; D. H a r e l. Facts and Feelings: Dilemmas in Designing the Yad Vashem Holocaust History Museum. Jerusalem, 2010, p. 18. *Հմմտ. Լ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Ե. Մ ա ր գ ա ր յ ա ն. Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները, Երևան, 2006, էջ 9:*

աշխատանքները: Սակայն պետք է փաստել, որ որոշ դեպքերում հատուկ դիտավորությամբ մի շարք իրադարձություններ չեն ներառվում Հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրություններում, քանի որ դրանք կարող են «նսեմացնել» Հոլոքոստի «եզակիությունը»[9]: Այնինչ Թուրքիայի կողմից արդեն մեկ դար շարունակվող Հայոց ցեղասպանության ժխտողականության պայմաններում կրկնակի դժվարանում է լուծում տալ «Ինչպե՞ս ավարտել ցուցադրությունը» հարցին. սովորաբար այսպիսի թանգարաններում ցուցադրության ավարտի հատվածում է, որ պետք է հաղորդագրություն հղել այցելուին: Ե՛վ Յադ Վաշեմի, և՛ ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրություններն ավարտվում են Հոլոքոստը վերապրածներին նվիրված հատվածով, որն իր մեջ ունի «զոհի կերպարից» դուրս գալու և նոր սերունդներին դաստիարակելու ենթատեքստ:

Այսպիսով՝ Հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրություններում ցեղասպանության ժամանակագրության բաժանումը հստակ է և դրանում արծարծված են վերոնշյալ երեք հիմնական փուլերը: ՀՅԹԻ-ի մշտական ցուցադրությունում նախացեղասպանական հատվածն առկա է Արևմտյան Հայաստանի և Օսմանյան Թուրքիայի տարածքում մինչև 1915 թ. գոյություն ունեցած հայաբնակ բնակավայրերը ներկայացնող քարտեզով ու ժողովրդագրական աղյուսակներով, որոնք պատմում են օսմանյան տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներում և այլ տարածքներում 1914 թ. դրությամբ ապրող հայ ազգաբնակչության թվակազմի, հայկական բնակավայրերի, հայկական գործող եկեղեցիների ու դպրոցների թվի մասին[10]: Սակայն պետք է նկատել, որ Հայոց ցեղասպանության ժամանակագրությունը սահմանազատված չէ, այլ կիրառված է այլ մոտեցում. ցուցադրությունում ներառված են Հայոց ցեղասպանության կանխամտածվածությունը և դիտավորությունը ներկայացնող փաստաթղթեր, ցեղասպանության վայրագությունները ներկայացնող լուսանկարներ և այլն: Հետցեղասպանական հատվածը ցուցասրահի փոքր մակերեսի պատճառով հպանցիկ է ներկայացված:

2. Ցեղասպանության «զոհ» և «վերապրած» հասկացությունների ընկալումը ու ներկայացման ձևերը մշտական ցուցադրությունում, մեր կարծիքով, չափազանց կարևոր են այցելուների և հատկապես օտարերկրյա այցելուների վրա զգացմունքային տեսանկյունից ազդելու համար: Այսպիսի հատվածի ներկայությունը թույլ կտա այցելուին ավելի հստակ պատկերացնել, թե ինչպես է ընկալվել ցեղասպանությունը վերապրողի կողմից, հուզական ինչպիսի աշխարհ է ունեցել նա և ինչպիսի վերաբերմունք՝ իր «դահիճների» հանդեպ: Կախված ցուցադրության հայեցակարգից՝ այցելուն կարող է ցեղասպանության «զոհ., «վերապրած» հասկացություններն ընկալել տարբեր կերպ[11]:

---

[9] *Հարցի շուրջ տե՛ս* A. G o l d b e r g. The “Jewish Narrative” in the Yad Vashem Global Holocaust Museum.– Journal of Genocide Research, 14(2), London, 2012, pp. 194–196.

[10] *Մանրամասն տե՛ս Լ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Ե. Մ ա ր գ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 18–20:*

[11] *Հարցի շուրջ տե՛ս նաև Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը. ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը.– «21-րդ դար», 2008, թիվ 4, էջ 135–155:*

ՀՅԹՐ-ի ցուցադրությունում մենք տեսնում ենք մոտեցում, որտեղ այն ներկայացված է ավելի շատ որպես 1,5 միլիոն հայի սպանություն, այն է՝ ազգի ողբերգություն[12]*: Անհատի ողբերգությունը, որը, մեր կարծիքով, ավելի հուզիչ, հետաքրքիր ու տպավորիչ է դարձնում տվյալ ցուցադրությունը, քան 1,5 միլիոն թիվը, որը ավելի շուտ նմանվում է վիճակագրության, ներկայացված է Ա. Մարդիկանյանին նվիրված հատվածով և «Հոշոտված Հայաստան» ֆիլմի*[13] *պահպանված դրվագների ցուցադրումով, ինչը էլ ավելի բացառիկ ու հետաքրքիր է դարձնում ցուցադրության այս հատվածը: Հավելենք, որ վերջին մոտեցումը զարգացվելու է ՀՅԹՐ-ի նոր ցուցադրությունում:*

Հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրության երթուղին համընկնում է Հոլոքոստի զոհի և վերապրածի անցած ուղուն, և այցելուն, ակամա, վերապրում է այն: Այս ամենին հասնելու համար Յադ Վաշեմի և ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրություններում բնօրինակի նույնությամբ վերականգնվել են համակենտրոնացման ճամբարների, գազախցիկների հատվածներ, թաքստոցներ, գնացքի վագոններ և այլն[14]*: Բացի այդ՝ այս թանգարանների մշտական ցուցադրություններում գերակայում են Հոլոքոստի զոհերի և վերապրածների լուսանկարները, անձնական իրերն ու նրանց հիշողությունները: ՀՅԹՐ-ի մշտական ցուցադրությունում այսպիսի առարկաների սակավությունը բացատրվում է նրանով, որ Հայոց ցեղասպանությանն առնչվող իրեր մեզ չափազանց քիչ են հասել: Այն դեպքում, երբ Հոլոքոստին առնչվող իրերը բավական շատ են, որը պայմանավորված է ոչ միայն երևույթի ավելի ուշ լինելու, այլ նաև այն իրողության հետ, որ դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջից տարբեր ռադիոկայաններ մարդկանց հորդորում էին պահել աշխարհամարտի տարիների նամակները և օրագրերը՝ որպես պատերազմի վերաբերյալ կարևոր փաստաթղթեր: Այսպես, օրինակ, Աննա Ֆրանկի օրագիրը պահվել է նմանատիպ հաղորդումների շնորհիվ*[15]*:*

ՄՆՀՀԹ-ում այցելուներին Հոլոքոստի զոհի և վերապրածի կենսագրությանը ծանոթացնելու արդյունավետ մեթոդ է մշակվել. այցելուներին մուտքի մոտ տալիս են «վկայական» (identification card)*, որտեղ ներկայացված է Հոլոքոստի զոհի կամ վերապրածի կենսագրությունը և այցելուն կարող է այն տանել իր հետ: Բացի այդ՝ ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրությունն իր մեջ ներառում է Հոլոքոստի զոհ փոքրիկ Դանիելի պատմությունը*[16]*: Այսինքն՝ ցուցադրությունը մեծ կարևորություն է տալիս ոչ միայն Հոլոքոստին որպես ընդհանուր երևույ-*

---

[12] *Դա վկայում է նաև Լ. Բարսեղյանի ու Ե. Մարգարյանի «Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները» գրքում վերոնշյալ հարցի քննարկման բացակայությունը:*

[13] *«Հոշոտված Հայաստան» գրքի հիման վրա 1918 թ. ԱՄՆ-ում նկարահանվեց համանուն խաղարկային ֆիլմը, որի գլխավոր հերոսուհին դարձավ 18-ամյա Ավրորա Մարդիկանյանը: Դա Հայոց ցեղասպանության վերաբերյալ գեղարվեստական առաջին ֆիլմն է:*

[14] *Մանրամասն տե՛ս* D. H a r e l. *Նշվ. աշխ., էջ 28–33, 38–44, 79, 83,* M. Berembaum. The World Must Know: The History of the Holocaust as Told in the United States Holocaust Memorial Museum. Boston, 1993, pp. 115, 146; J. W e i n b e r g, R. E l i e l i. *Նշվ. աշխ., էջ 78–153:*

[15] *Մանրամասն տե՛ս* A. K r a m e r. Anne Frank: The Young Writer who Told the World her Story. Washington, 2007, p. 45.

[16] *Հարկ ենք համարում նշել, որ Դանիելի կերպարը հորինված է, այն ներկայացնում է Հոլոքոստին զոհ գնացած միլիոնավոր հրեա երեխաների հավաքական կերպար (մանրամասն տե՛ս* www.youtube.com/watch?v=kZRc020xM7c*):*

թի, այլ նաև ներկայացնում է անհատին՝ համարելով իր հայեցակարգի հիմնական սկզբունքներից մեկը[17]:

3. Ցեղասպանությանը նվիրված ցանկացած թանգարան իր մշտական ցուցադրությունում պետք է որոշակի տեղ հատկացնի տվյալ ցեղասպանության կազմակերպիչներին՝ «մեղավոր կողմին»: Ցեղասպանության թեմային նվիրված ցուցադրությունը դասվում է «դժվար» ցուցադրությունների շարքին: Իսկ ցեղասպանությանը նվիրված ցանկացած ցուցադրության կազմակերպման մեջ կարելի է ամենաբարդ և ամենանուրբ խնդիրը համարել ցեղասպանության «մեղավոր կողմին» ներկայացնելու սկզբունքը. գաղափարախոսությունը ռասիզմից տարանջատող սահմանը սովորաբար խիստ թույլ է ընդգծված լինում, և մեկ չմտածված քայլն անգամ կարող է ցուցադրությունը տանել ռասիզմի ուղղությամբ: Եվ քանի որ թանգարանն ընդհանրապես իրենից ներկայացնում է հարատև երևույթ և այն ձևավորելու է առնվազն մի քանի սերունդների արժեհամակարգ ու այս կամ այն կերպ նպաստելու է որոշակի գաղափարախոսության ազդեցության ներքո ցեղասպանություն իրականացրած էթնիկական կամ այլ հանրության մասին որոշակի կարծիք ձևավորելու գործընթացին, ապա նյութի փոքր-ինչ սխալ ներկայացումն ու մեկնաբանումն անգամ կարող է խիստ վտանգավոր ազդեցություն և հետևանք ունենալ:

Հոլոքոստին նվիրված թանգարանների ցուցադրություններում որպես մեղավոր կողմ ներկայացված է ոչ թե էթնիկական խումբ (գերմանացիներ), այլ որոշակի գաղափարախոսության կրողներ (հակասեմականներ, ֆաշիստներ, նացիստներ). այդ են վկայում նաև նրանց հսկայածավալ աշխատությունների, բազմաթիվ վերկայքերի մեջ «գերմանացի» բառի իսպառ բացակայությունը և «նացիստ», «ֆաշիստ», «նացիստական Գերմանիա», «ֆաշիստական Գերմանիա» ձևակերպումների առատությունը[18]: Հավելենք, որ Հոլոքոստին մասնակցություն են ունեցել նաև Արևելյան Եվրոպայի կոլլաբորացիոնիստները (թշնամուն գործակցող անձիք), և դա ևս մեկ պատճառ է, որ Հոլոքոստին նվիրված թանգարաններում դատապարտվեն ոչ միայն ֆաշիստ, նացիստ և հակասեմականություն տարածող գերմանացիներն, այլ նաև նման գաղափարախոսություն կրողներն ընդհանարապես: Ցուցադրությունների ենթատեքստում հստակ երևում է «Ոչ բոլոր գերմանացիներն են ֆաշիստներ և ոչ բոլոր ֆաշիստներն են գերմանացիներ» կարգախոսի առկայությունը: Չնայած այն հանգամանքին, որ Դանիել Գոլդհագենը փորձում է գիտական հիմքի վրա դնել այն տեսակետը, որ գրեթե բոլոր գերմանացիներն էլ պատասխանատու են Հոլոքոստի համար[19]: Այս կարգախոսին նպաստում է Հոլոքոստի տարիներին հրեա ազգին օգնության ձեռք մեկնած գերմանացիների և այլազգիների հիշատակումը մշտական ցուցադրություններում, որով համակ հրեությունն

---

[17] J. W e i n b e r g, R. E l i e l i. *Նշվ. աշխ., էջ 71–72*.

[18] *Հոլոքոստի վերապրողների պատմություններում հաճախ հանդիպում ենք «գերմանացի», «գերմանացիներ» բառերին: Հարցի քննարկումը տե՛ս նաև Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Հայ ինքնության պատկերագրությունը, հ. 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009, էջ 65–66:*

[19] *Մանրամասն տե՛ս* D. G o l d h a g e n. Hitler's Willing Executioners: Ordinary Germans and the Holocaust. New York, 1997, pp. 455–461.

իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը վտանգի են ենթարկել հանուն մարդասիրական վեհ գաղափարների: Փաստորեն, Հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրություններում հստակ ընդգծված են «մեղավոր կողմի» շրջանակները. նախ մեղադրվում են հակասեմականություն տարածող և սերմանող անձիք, որը ցուցադրության այս հատվածի հիմնական մասն է կազմում, ապա բոլոր նրանք, ովքեր մասնակցություն են ունեցել Հոլոքոստին և եղել են հրեա ազգի անմիջական դահիճները: Յադ Վաշեմի նոր մշտական ցուցադրության կազմակերպման աշխատանքներին նվիրված գրքում հեղինակը՝ Դորիթ Հարելը, անդրադառնալով «մեղավոր կողմի» ցուցադրման երկվությանը, հռետորական հարց է բարձրացնում, թե արդյո՞ք պետք է Հոլոքոստի հիշողության մեջ տեղ հատկացնել նրանց, չէ որ դա կանմահացնի նրանց անունները: Սակայն, ի վերջո, որոշվում է ներկայացնել Հոլոքոստի կազմակերպիչների պարագլուխներին Հիտլերի գլխավորությամբ. յուրաքանչյուր պարագլխի լուսանկարը փակցված է սև արկղի վրա, որին կից նրա՝ Հոլոքոստին ունեցած մասնակցության և դերի մասին տեղեկատվություն, իսկ արկղի մեջ՝ վերջինիս անձնական տվյալները[20]: ՄՆՀՀԹ-ում «մեղավոր կողմին» ցուցադրելու համար, ի թիվս մշտական ցուցադրության, օգտագործվում են “Nazi Rize to Power” *և* “Antisemitism” *ֆիլմերը, ինչպես նաև մուլյաժներ, առարկաներ, լուսանկարներ և տեքստեր:*

ՀՅԹԻ-ի մշտական ցուցադրությունը «մեղավոր կողմ» է ներկայացնում երիտթուրքական և քեմալական վարչակարգերը՝ դատապարտելով ոչ թե ողջ թուրք ժողովրդին, այլ հիմնական շեշտը դնելով պանիսլամիզմ և պանթուրքիզմ սերմանող անհատների վրա:

Հոլոքոստի ժամանակ շատ գերմանացիներ իրենց կյանքը վտանգելով փրկել են հրեաների՝ ելնելով միայն մարդասիրական գաղափարներից, այն դեպքում, երբ Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության կողմից հայերին փրկելու փաստը հիմնականում պայմանավորված էր շահ և օգուտ ստանալու հանգամանքով. շատ կանայք ու աղջիկներ դառնում էին հարեմի անդամ, երեխաների մեծ մասն օգտագործվում էր որպես հավելյալ աշխատուժ և այլն[21]: Անշահախնդիր օգնության դեպքերը չնայած եզակի են, սակայն կան և այսպիսի օրինակների ընդգրկումը մշտական ցուցադրությունում այցելուին ավելի «առողջ» ու ամբողջական պատկերացում կտա Հայոց ցեղասպանության մանրամասների վերաբերյալ:

Փաստորեն, ելնելով իր առջև դրված խնդիրներից, Հայոց ցեղասպանությանը նվիրված միակ թանգարանի մշտական ցուցադրությունում «մեղավոր կողմի» ցուցադրումը փոքր-ինչ թույլ է համակարգված. հստակ չի սահմանվում «դահիճների» պարագլուխների շրջանակը, և թույլ են ներկայացված պանիսլամիստական ու պանթուրքական գաղափարախոսությունները: Չկա նաև թուրք երախտավորներին նվիրված հատված:

---

[20] D. H a r e l. *Նշվ. աշխ., էջ 54:*

[21] *Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները.– ՊԲՀ, 2011, -2, էջ 29–30, Հ. Չ ա ք ր յ ա ն. 1915-ին ոչ մի թուրք որևէ հայ երեխայի չի փրկել.– □Զայն համշենական□, 9–10 (86–87), սեպտեմբեր–հոկտեմբեր, Երևան, 2011:*

4. Խիստ կարևոր խնդիր է նաև այլ ցեղասպանությունների, տեղահանությունների ու կոտորածների ներկայացվածությունը ցուցադրության մեջ: Ե՛վ - Հայոց ցեղասպանությանը, և՛ հրեաների Հոլոքոստին զուգահեռ ընթացել են այլ ժողովուրդների ցեղասպանություններ, կոտորածներ և տեղահանություններ: Ցեղասպանության գործընթացն ամբողջությամբ հասկանալի կլինի այցելուին, եթե ցուցադրվի պատկերն ամբողջությամբ. 1900–1923 թթ. Օսմանյան կայսրությունում սպանվել են 3.500.000-ից մինչև 4.300.000 հայեր, հույներ, նեստորականներ և այլ քրիստոնյաներ.[22] 1914–1923 թթ. Արևելյան Թրակիայում, Պոնտոսում և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում երիտթուրքերի և քեմալականների հակաքրիստոնեական քաղաքականության հետևանքով միայն զոհված հույների թիվը կազմում է նվազագույնը 500.000 մարդ (իսկ առավելագույնը՝ 1.000.000)[23]: 1914–1918 թթ. պատերազմի տարիներին, ինչպես նաև տարագրության ճանապարհին բնաջնջման ենթարկված ասորիների թիվը հասնում է նվազագույնը 250 հազարի (առավելագույնը՝ 750 հազարի)[24]:

Հոլոքոստի ընթացքում Գերմանիայի նացիստական քաղաքականությանը հրեաներից բացի (5.600.000-ից մինչև 6.250.000) զոհ գնացին նաև այլ ազգեր ու խմբեր՝ հոգեկան շեղումներ ունեցողներն ու հաշմանդամները (70.000), կաթոլիկ լեհերը (3.000.000), պատերազմի սովետական գերիները (3.000.000), Եհովայի վկաները (2.500), գնչուները (222.000-ից մինչև 250.000)[25]:

Դիտարկենք, թե այս հարցի շուրջ ինչպիսի մոտեցումներ են ցուցաբերված ուսումնասիրվող թանգարանների մշտական ցուցադրություններում:

ՀՅԹԻ-ի մշտական ցուցադրությունում թանգարանի հիմնադիր տնօրեն Լ. Բարսեղյանի խոսքերով այլ ժողովուրդների ցեղասպանությունները, տեղահանությունները և կոտորածները տեղ չեն գտել թանգարանի ցուցասրահի փոքր մակերեսի պատճառով[26]: Յադ Վաշեմում նույնպես ներկայացված է միայն հրեաների Հոլոքոստը, սակայն, ի տարբերություն ՀՅԹԻ-ի, այստեղ Հայոց ցեղասպանությունն ի սկզբանե ներառված չի եղել թանգարանի մշտական ցուցադրության հայեցակարգում[27]: Բացառություն է կազմում միայն ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրությունը, որը ներառում է Հոլոքոստի մյուս զոհերին, սակայն անդրադարձը հպանցիկ է և ցուցադրության հիմնական շեշտը դրված է

---

[22] R. R u m m e l. Statistics of Democide: Genocide and Mass Murder since 1900. Munster, 1998, p. 78.

[23] *Գ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914–1923 թթ.), Երևան, 2012, էջ 178:*

[24] *Ա. Խ ո ս ր ո վ ա. Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 89:*

[25] L. W e b e r . The Holocaust Chronicle. Lincolnwood, 2009, p. 699.

[26] *ՀՅԹԻ-ի հիմնադիր տնօրեն և ՀՊՄՀ-ի թանգարանային գործ ու հուշարձանների պահպանության բաժնի ամբիոնի վարիչ Լ. Բարսեղյանի հետ ՀՅԹԻ-ի կազմավորման և նրա մշտական ցուցադրության նախագծման և հայեցակարգի հիմնական սկզբունքների մասին զրույցից (2013 թ. մարտի 18, ՀՊՄՀ):*

[27] *Մանրամասն տե՛ս* D. H a r e l. *Նշվ. աշխ.:*

հրեաների Հոլոքոստի վրա[28]*: Իսկ ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության ներկայացվածությանը ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրությունում, ապա դա «ապահովվում է» Հիտլերի հայտնի մեջբերումով. «Ի վերջո, ո՞վ է հիմա հիշում հայերի ոչնչացումը»*[29]*: Ցուցադրության մեջ Հայոց ցեղասպանությունը չներգրավվելու փաստը բացատրվում է նրանով, որ ԱՄՆ-ը և Թուրքիան դաշնակիցներ են ու սերտ համագործակցում են ՆԱՏՕ-ի շրջանակներում, և, բացի այդ, Թուրքիան ճնշումներ գործադրելու առիթը բաց չէր թողնում*[30]*: Կա նաև այս հարցի շուրջ ՄՆՀՀԹ-ի պաշտոնական մեկնաբանությունը՝ վերջինս պետական կառույց է, ու քանի որ ԱՄՆ-ը պաշտոնապես դեռ չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ապա և թանգարանն իր ցուցադրության մեջ այն չի ներառել*[31]*:*

Փաստորեն, եթե բացառությամբ ՄՆՀՀԹ-ի՝ մյուս թանգարաններն իրենց մշտական ցուցադրություններում չեն ներառել այլ ժողովուրդների ցեղասպանություններ, տեղահանություններ և կոտորածներ՝ ելնելով տարբեր պատճառներից, ապա ՄՆՀՀԹ-ի մշտական ցուցադրությունում էլ առանձնահատուկ դեր է տրված հենց հրեաների Հոլոքոստին, մինչդեռ անդրադարձը գնչուների ցեղասպանությանը հպանցիկ է, իսկ Հայոց ցեղասպանությանը, ելնելով քաղաքական շահերից, միայն փոքրիկ հիշատակման ձևով է արված:

Այսպիսով՝ վերոբերյալից կարող ենք գալ այն եզրահանգման, որ կախված իրենց առջև դրված խնդիրներից և ցեղասպանության ճանաչվելու փաստից, Հայոց ցեղասպանությանն ու հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարաններն իրենց մշտական ցուցադրությունների հայեցակարգային մոտեցումներում դրսևորում են որոշակի առանձնահատկություններ և նմանություններ: Եվ եթե Յադ Վաշեմի[32] *մշտական ցուցադրությունը հղկվել է՝ անցնելով երկար ճանապարհ և մի քանի անգամ փոխելով այն, իսկ ՄՆՀՀԹ-ի*[33] *հետաքրքիր լուծումները պայմանավորված են երկար տևած նախապատրաստական աշխատանքներով, մարդկային ու նյութական հսկայական ռեսուրսներով, ինչպես նաև ցուցանմուշների առատությամբ, ապա ՀՅԹԻ-ի*[34] *մշտական ցուցադրությունը կարճ ժամանակահատվածում և ոչ մեծ ռեսուրսներով կարողացել է լու-*

---

[28] *Հարցի շուրջ մանրամասն տե՛ս* E. L i n e n t h a l. Preserving Memory: The Struggle to Create America's Holocaust Museum. New York, 2001, pp. 228, 240–248. *Տե՛ս նաև Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 38:*

[29] J. W e i n b e r g, R. E l i e l i. *Նշվ. աշխ., էջ 99, Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Հայոց ցեղասպանության և հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 41,* K. B a r d a k j i a n. Hitler and the Armenian Genocide. Cambridge, 1985.

[30] *Հարցի շուրջ մանրամասն տե՛ս* E. L i n e n t h a l. *Նշվ. աշխ., էջ 228–239:*

[31] *Մանրամասն տե՛ս Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 40–42:*

[32] *Յադ Վաշեմը հիմնադրվել է 1953 թվականին: Այս մասին մանրամասն տե՛ս* http://www.yadvashem.org/yv/en/about/index.asp*; Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Յադ Վաշեմն ու Իսրայելի հասարակությունը:*

[33] *ՄՆՀՀԹ-ի նախապատրաստման աշխատանքները սկսվել են 1978 թվականին, իսկ թանգարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1993 թ. ապրիլի 22-ին:*

[34] *Հայոց ցեղասպանության թանգարանի բացումը տեղի է ունեցել 1995 թ. սեպտեմբերի 21-ին:*

ծել իր առջև դրված հիմնական խնդիրները՝ թերացումների ու զանազան այլ խնդիրների լուծումը թողնելով նոր մշտական ցուցադրությանը:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПОСТОЯННЫХ ЭКСПОЗИЦИЙ МУЗЕЕВ ГЕНОЦИДА АРМЯН И ЕВРЕЙСКОГО ХОЛОКОСТА

ХАЧАТУР КОБЕЛЯН

Резюме

В концепции постоянных экспозиций музеев Геноцида армян и еврейского Холокоста есть сходные черты и отличия, обусловленные поставленными перед музеями задачами. Особенности экспозиций выражаются в том, как представлены хронология Геноцида, материалы о жертвах и о переживших Геноцид, виновная сторона, другие геноциды, массовые убийства и депортации.

COMPARATIVE ANALYSIS OF THE ARMENIAN GENOCIDE AND JEWISH HOLOCAUST MUSEUMS PERMANENT EXHIBITIONS

KHACHATUR KOBELYAN

Summary

In the permanent exhibitions of the Armenian Genocide and Jewish Holocaust museums there are similar features and differences, depending on some issues and achievements put before the museums. The peculiarities of exhibitions are displayed with presenting the Genocide chronology, the materials of the Genocide witnesses and survivors, the guilty side, other genocides, massacres and deportations.